




ՀԱՅ ՄՏՔԻ ՀՍԿԱՆԵՐ

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՈՐՊԵՍ ԴԱՍՏԻԱՐԱԿ
(1943 թ.)

Մարդը դարձնել ավելի ապատ, ավելի արդար ու ավելի բարի, ահա մեծագույն հեղափոխությունը զոր կարելի է երևակայել:

Ահա մեծագույն հեղափոխությունը որուն համար դարեր բազմաթիվ, ուս-ուսի տված կմաքառին, միշտ դեպի հառաջ կքալեն, նոր ու նոր ճամփաներ կորոնեն:

Ահա վերջապես մեծագույն հեղափոխությունը որուն համար մարդկային հսկա ուժեր ու արժեքներ, մտածման ու տքնության տիտաններ, սերունդե սերունդ կտառապին, կպայքարին, կզոհվին՝ միշտ հավատալով մարդկության գալիք երջանկության:

Այդ մեծագույն հեղափոխության ձգտող պայքարը հարատև է և ամեն բանե առաջ աշխատանքի ուժը, մտածումի գյուտը և զգացումին ազնվությունն են որ դրական նպաստներ կբերեն ու տակավ կհասունցնեն մարդկային կյանքի հեղաշրջումը:

Այս հսկա աշխատանքին մեջ, առաջին գծին վրա կանգնած է դաստիարակության գործը:

Խ Ո Ս Ք
ՈՒՂՂՎԱԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
(1955 թ.)

Հուլյեցիո, ոգևորեցիո ու ներշնչեցիո բոլոր հայերը: Եվ մեր օրերուն ամեն լարերեն աղոթք բարձրացավ հայոց Աստուծուն Քու կյանքիդ համար, Քու փառքիդ համար:

Քու մեծ սրտիդ մեջ, Քու լույս խոսքիդ մեջ ժողովուրդը մեր իր հոգին գտավ՝ բյուրեղացունը իր վառ հույսերուն, իրավ խոհերուն, արդար տենչերուն:

Պատմությունն ամբողջ Քու կյանքիդ՝ պատմությունն եղավ Քու ազգիդ՝ այրող վիշտերով, որոնումներով, հաղթանակներով:

Արջալուսին վառ Քու կյանքիդ սեմին գիշեր էր իջեր հայոց երկնքին. բայց մայրամուտին Քու ընծա կյանքիդ արջալույս ծագեց Հայոց աշխարհին:

Այդ լուսաբացին Դուն արև եկար և Քու լույս հոգով հայոց արևին լույսն աճեցուցիր Քու կյանքի երգով, Քու հույսի երգով, Քու սիրո երգով:

Կ Ո Ն Դ Ա Կ

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԾՆՆԴՅԱՆ

ՀԱՋԱՐՎԵՅՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

(1961 թ.)

Սուրբ Մեսրոպի գործով հայ ժողովուրդը իր ինքնությունը գտավ, իր մտքի ու զգացումի կաղապարները ձուլեց և հորինեց՝ իր ապրելու և ստեղծագործելու ոճը:

Մեր ազգային ամբողջ մշակույթը իր բոլոր վավերական արժեքներով՝ գրականության, ճարտարապետության, գիտության և արվեստներու մեջ, սկիզբ կառնեն Սուրբ Գրիգոր Լուսավորչի և Սուրբ Մեսրոպ Մաշտոցի տեսիլքներեն: Այդ ոգեկան աղբյուրներեն է, որ բուն հայ ժողովուրդը ծնավ՝ իր հոգիով, իր իմացականությամբ, իր զգայնությամբ, իր պատմությամբ, իր մշակույթով:

Այդ ինքնաճանաչման ու ինքնակերտման ճանապարհին վրա կապմվեցավ և դարբնվեցավ նաև հայուն ազատ ապրելու կամքը: Սուրբ Մեսրոպն է, որ միշտ զորացուց բազուկը Հայրենյաց պաշտպան հայ հերոսներուն՝ Ավարայրեն մինչև Սարդարապատ:

Մեռած չէ սակայն Օջականի Սուրբը, «Քանզի անմահ է յիշատակ նորա» (Իմաստթ. Դ 1):

Սուրբ Մեսրոպ այսօր ամենակենդանի հայն է: Ան կապրի մեր վերապրող ու վերածնած ժողովուրդի սրտին մեջ և շրթներուն վրա, Հայրենի աշխարհի ափերեն մինչև հեռուները հայ սփյուռքին:

Սուրբ Մեսրոպը կապրի մանավանդ ու կգործե՝ մեր արդի վերաջինված հայրենի կտուրին տակ, քաղաքամայր Երևանի Մատենադարանի կամարներուն ներքև Հայաստանի համալսարանի և դպրության բազում հաստատություններուն մեջ:

Խ Ո Ս Ք

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԾՆՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱ

ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

(1961 թ.)

Տակավին իր ձևերը փնտռող, մշուշապատ հայ հոգեկան աշխարհին մեջ, փայլատակեց Սուրբ Մեսրոպի արարչագործ պատգամը՝ «Եղիցի լոյս»: «Եւ եղև լոյս»: Սուրբ Մեսրոպի հանձարով, հայ ժողովուրդը իր սեփական ճանապարհը գտավ: Գտավ իր ինքնությունը և աղբյուրը իր ոգեկան ուժերուն: Գտավ իր ոճը: Եվ ամբողջ Ազգ մը ահա, ավելի քան հազար և հինգ հարյուր տարիներէ ի վեր, այդ ոգեկան-իմացական ձևերուն մեջ, կձուլե, կդարբնէ իր մտածումները, իր հույսերը և իր տենչերը, առանց հինը կրկնելու, այլ միշտ

նվաճելով նորանոր ու անմատչելի բարձունքներ մշակութային ստեղծագործության հորիզոնին վրա:

Եթե Մեսրոպ Մաշտոց կարողացավ մշակութի արև ջահը վառել Հայոց Աշխարհին մեջ, հայ ժողովուրդն ալ կարողացավ այդ ջահը վառ պահել տիրաբար ու փոխանցել զայն սերունդե սերունդ և հասցնել մինչև մեր օրերուն, մեր սերունդին:

Կ Ո Ն Դ Ա Կ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

(24 հունվար 1969 թ.)

Արդարև, ինչպես Սուրբ Մեսրոպ քառսեն դուրս բերավ և բյուրեղեց ձայները հայ բարբառին, և իր ազգին ու աշխարհին պարգևեց կոթողը հայերեն լեզվին, այնպես ալ Կոմիտաս վարդապետ՝ պեղեց, մաքրեց և լուս աշխարհ բերավ կույս աղբյուրը հայ երգին: Եվ բազում տարիներ, անդու, անհոգնաբեկ, միշտ նոր ավունով ու ստեղծարար տենդով, այդ աղբյուրեն հայ երգին լույսը բաշխեց իր ժողովուրդին:

Լսե՛ Կոմիտա՛ս, վարդապետ արդար, երգը նոր Հայաստանին: Այդ քո՛ւ երգդ է, որ քեզի կուգա: Այդ երգի թևերով, ամբողջ ազգը հայոց, որ ի Հայաստան և ի սփյուռն աշխարհի, երախտապարտ սիրով կխոնարհի քու հիշատակիդ և մեծ գործիդ առջև, քու տեսիլքներովդ հավետ հավատարիմ մնալու սրբազան ուխտով:

Ք Ա Ր Ո Ջ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

(6 հունվար 1978 թ.)

Հովհաննես Կոլոտ և Ներսես Աշտարակեցի մեր Մայր Եկեղեցու Հայրապետները, տասնևութերորդ դարում և տասնևիններորդ դարի արշալույսին, հանդիսացան Եկեղեցու այն երկու սյուները, հայաշունչ ու հայրենաշեն արիացյալ Հայրապետները, որոնք լուսավորեցին հայոց մթազնաձ երկնակամարը և հայ ժողովրդին առաջնորդեցին դեպի ինքնաճանաչում, դեպի ինքնակազմակերպում և վերածնունդ՝ հոգևոր-եկեղեցական, կրթական, մշակութային ու ազգային քաղաքական իմաստով:

Հայաստանյայց Մայր Եկեղեցու այս երկու լուսավոր դեմքերը հանդիսանում են՝ առաջինը արևմտահայության, և երկրորդը արևելահայության հոգեվոր ու ազգային պարթոնքը սկզբնավորող ռաիվիրաները, որոնց նվիրական գործը փայլուն կերպով շարունակեցին ապա նրանց աջակերտները և հաջորդող սերունդները հայոց մայր հողի վրա, թե՛ արևելյան և թե՛ արևմտյան հողամասերում:

Եվ որովհետև վերջերս արժանավայել կերպով նշվեց ծննդյան երեքհարյուրամյակը Մխիթար Սեբաստացի աբբահոր, անկ է չմոռանալ թե նույն այդ պատմաշրջանում, թեև հեռավոր օտար հողի վրա, սակայն նույն Խայաշունչ ոգով նա և իր միաբանությունը իրենց նպաստը բերեցին հայ ժողովրդի վերածննդի վարճացմանը, իրենց գիտական, գրական և կրթական վաստակով:

Խ Ո Ս Ք

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐԺԻ ԾՆՆԴՅԱՆ
300-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ
(8 հոկտեմբեր 1978 թ.)

Հայաստանի գյուղացիք, երբ տեսնում են մի քանդված եկեղեցու շենք, կիսավեր կամ փուլ եկած, չեն ասում՝ քանդված եկեղեցի, չեն ասում փուլ եկած եկեղեցի, չեն ասում՝ ավերակ եկեղեցի, այլ ասում են՝ խոնարհված եկեղեցի: Սա շատ հատկանշական է և շատ իմաստավոր ու խորհրդանշական: Կարծում ենք, ոչ մի այլ ժողովուրդ այսպիսի արտահայտություն չի գործածում: Հայ գյուղացու գիտակցության մեջ եկեղեցին չի կարող կործանված լինել, չի կարող քանդված լինել, չի կարող ավերակ լինել, այլ խոնարհվում է միայն ժամանակավորապես: Կարծում ենք, որ այսօր կարող ենք ասել, թե ԺՁ և ԺԷ դարերին էլ հայ ոգեկանությունը պարզապես խոնարհված էր, սակայն ինչ-որ առկայծ ճրագ վառվում էր աներևույթ կերպով: Այդ առկայծ ճրագը իր առաջին ճառագայթները սկսեց դրսևորել մեր վանքերում: Քիչ առաջ Սրբազան Պատրիարքը հիշեց, թե ինչպես այդ կայծերը, տակավին Ս. Տաթևացու օրերից, փոխանցվել են այլ վանքերի, և դրանց ծնունդը հանդիսացավ հենց ինքը՝ Հովհաննես Կոլոտ պատրիարքը, իբրև աշակերտը իր ուսումնաստենչ, լուսամիտ վարդապետների: Այս ձևով է, որ ԺԸ դարի սկզբին առաջին հայ լուսավորիչը հանդիսացավ Հովհաննես Կոլոտը բուն մայր հողի վրա, իբրև եկեղեցաշեն, իբրև եկեղեցական կյանքը վերանորոգող, իբրև ժողովրդի միտքն ու հոգին լուսավորող ու դաստիարակող առաքյալ:

Ք Ա Ր Ո Ջ

ՀՐԱԺԵՇՏԻ, ՓԱՐԻՁԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅՈՒՄ ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ
(24 մայիս 1981 թ.)

Երեկ կարդացի «Լը մոնդ» փարիզյան թերթին մեջ սքանչելի հոդված մը, նվիրված մեր Սարոյանին: Հոդվածի հեղինակը Վիլյամ Սարոյանը կընորոշե իբրև մեր ժամանակաշրջանի «բնության երևույթներեն» մին նմանցնելով պայն հպոր գեյպերի մը:

Ինչպես գիտեք, գեյպերներ կկոչվին բնության հրաշալի այն երևույթները Իսլանդիայի մեջ, որոնք եռացող տաք ջուրերու ժայթքումներ են երկրագնդի խոր ընդերքներեն, տասնյակ հարյուրավոր մետր բարձրությամբ: Հեղինակը Վիլյամ Սարոյանը կնկատեր մեր օրերու մարդկության հոգեկան աշխարհի ընդերքներեն ժայթքող այդպիսի երևույթ մը: Իրապես Սարոյանի գրականությունը տարերային պոռթկում է, մտածումներու և հույզերու հեղեղ, պարզ ու անկեղծ, ճշմարիտ ու համարձակ, առանց գրական պճնանքներու, բայց խորապես մարդկային, միջտ զվարթ ու լավատես, վեր ամեն տեսակ գաղափարախոսություններեն:

Որպես հայ մարդ, Ես կխորհիմ, թե գեյպերի նմանող Սարոյան երևույթը, հպոր ժայթքում մըն է հայ ժողովրդի ոգեկանության ընդերքներեն, որ նա իր արյան մեջ ժառանգած է իր նախնիքներեն:

Այո, Վիլյամ Սարոյանի ամբողջ գրականությունը, ոգին՝ մեր Երբը ալեկոծող գաղափարախոսություններեն վեր կսավառնի և կարծես բոլորին կլուսավորե իր հոգիի բարությունը, իր մարդասիրությամբ, իր ավանդությամբ, իր անկեղծությամբ, իր միամտությամբ իսկ:

Ք Ա Ր Ո Ջ
 ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ
 ՀԻՇԱՏԱԿԻ ԱՌԹԻՎ
 (25 ապրիլ 1982 թ.)

Հայոց վերածնունդի հաղթական երթին պատկանող տաղանդավոր գրագիտուհի պետք է նկատենք նաև Մարիետա Շահինյանը: Ճիշտ է, նա հայերեն լեզվով չգրեց, ոռուներեն լեզվով ստեղծագործեց, բայց հայ ոգեկանության, հայ մտածողության, հայ ոգու արտահայտությունն եղավ նա, որ իր ուրույն նպաստը բերեց ընկերվարական, մարդասիրական գաղափարների հաղթանակի ճանապարհի վրա: Նրա կյանքն ու գործը պայծառ արտահայտությունն էր արդարության համար դարերով հալածված հայ ժողովուրդի:

Կարող ենք Մարիետա Շահինյանը նմանեցնել Վիլյամ Սարոյանին, որ նույնպես հայերեն չգրեց, սակայն խորապես հայ մարդ մնաց սկիզբից մինչև վերջ, մինչև իր վերջին շունչը:

